# ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

## I

*Պատ. Խմբագրութեան «Արարատի»*

*կխնդրէինք, որ եկտող" հրատարակէիք Թերթիդ մերձակայ համարներէն մէկուն մէջ*

### Վարագայ Հայրիկեան գրադարան

Վարագայ Հ. վարժարանի հիմնարկութեան հետ միաժամանակ՝ դպրոցի հիմնադիրը՝ Խրիմեան Հայրիկ հիմնած է նաև գրադարան, ուր 60-ական թուերէն մինչև 80-ական թուերը հաւաքուած էին 1300 կտորի չափ պատմական, կրօնական, բանասիրական և գիտական, ինչպէս նաև գրչագիր ձեռագիրներ և 40-ի չափ զանազան լրագիրներ և հանդէսներ: Սակայն, այն օրէն ի վեր, երբ Թիւրքական հին ռէժիմը սկսաւ իւր աշխարհահռչակ հալածանքը մամուլի և կուլտուրական հիմնարկութիւններու դէմ, գրադարանս զրկուեցաւ ոչ թէ միայն ճոխանալու ոևէ հնարաւորութիւնէ՝ այլ և իր ունեցած գրքերէն, ենթարկուելով կառավարական յափշտակութեան ի քրտական ալան—թալանին, որով այժմ ըստ ամենայնի զուրկ է թէ ժամանակակից գրականութեան շրջանին պատկանող հրատարակութիւններէն և թէ իր նախկին ունեցածներու կարևոր մասէն (այժմ հազիւ թէ ունի 800 կտոր տպագրուած և ձեռագիր գրքեր):

Բայց թէ որքա՛ն կարևոր է Վարագայ համար ճոխացնել իր գրադարանը գրականութեան բազմազան ճիւղերով, այդ կարծեմ աւելորդ է բացատրել, բաւական է յիշել միայն այն պարագան թէ՝ Վարագ ունի իր ծոցին մէջ վարժարան մը որուն գիշերօթիկ սաներու համար գրադարանը դպրոցի անհրաժեշտ բաղկացուցիչ տարրն է:

Ուրեմն կը խնդրէինք յարգելի հեղինակներէն, հրատարակիչներէն և գրավաճառներէն՝ որ իրենց հեղինակութիւններէն, հրատարակութիւններէն և վաճառելի գրքերէն նուիրատուութեամբ բաժին հանէին նաև Վարագայ Հ. գրադարանին: Անշուշտ կը լինին նաև բարի մարդիկ, որոնք իրենց սեփական գրադարանէն, կամ սեփական միջոցներէն ալ կը փափագին ճոխացնել յիշեալ հաստատութիւնը:

Աւելորդ չենք համարիր այս առթիւ յայտարարել նաև թէ՝

1) Ստացուած գրքերէն, բացի բուն Վարագայ կեդր գրադարանէն, բաժին պիտի հանենք նաև այն մասնաճիւղ գիւղական գրադարաններուն, որոնք դարձեալ Հայրիկի անունով պիտի հիմնուին այն գիւղերը, ուր պաշտօն ունին Վարագայ շրջանաւարտ ուսուցիչներն, եթէ միայն մէկէ աւելի օրինակներ ունենանք իւրաքանչիւր հրատարակութենէն։

2) Գրադարանէս պիտի օգտուին, բոլոր այն անհատներ կամ ընտանիքներ, որ գարնանէ մինչև աշուն, օդափոխութեան համար Վարագ կը մնան:

3) Վարագայ շրջակայ գիւղացիները:

Նուէրներ կարելի է ղրկել փոստով ուղղակի դպրոցիս անունով կամ դպրոցիս «յոբելենական յանձնախումբ»ներուն միջոցաւ, որոնց կազմութեան ձեռնարկուած է ի մէջ այլոց հետևեալ քաղաքներուն մէջ—Կովկաս՝ Թիֆլիս, Պաքու, Երևան, Թիւրքիա՝ Պոլիս. Եգիպտոս՝ Գահիրէ. Ամերիկա՝ Զըլսի, և այլն:

Հասցէ—Վան, Վարագայ վարժարան

Արտասահմանէն Van (Turquie d'Asie) Ecole de Varag

Տեսուչ Վարագայ Հ. վարժարանի **Ա. Դարբինեանց**

# II

Արժանապատիւ Տ. Եմմանուէլ քահանայ Նազարեանցի յորդորով Մասկուաբնակ Տիկին Եւդոկիա Պօպովա ուղարկել էր Մայր Տաճարի գործածութեան համար ազնիւ տեսակի կնդրուկ 12 ֆունտ. իսկ Տ. Մկրտիչ քահանայ Ղազարեանի յորդորով Ս. Պետերբուրգում բնակուող Տիկին Աննա Նազարեանցը ուղարկել է 15. ֆ. երեք տեսակի կնդրուկ:

Այս առատաբուղխ նուէրների մասին յայտնում եմ խորին շնորհակալիքս վերոյիշեալ համեստափայլ տիկիններին և Արժանապատիւ քահանաներին, որոնք հեռու վայրերից չեն զլանում իրենց լուման ձգելու Մ. Տաճարի աղքատիկ գանձանակը, և մասամբ նպաստում նրա բարեզարդութեանց:

Խնդրում եմ այս մասին հրատարակել «Արարատի» մերձակայ համարում ի գիտութիւն յարգելի նուիրատուներին:

Մայր Տաճարի Լուսարարապետ **Դիոնիս Եպիսկոպոս:**

№ 18

27 մարտի 1909 ամի

Ս. Էջմիածին

# ԱՐԱՐԱՏԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

*Ուղարկելով Երեւանի նպաստամատոյց մասնաժողովի համառօտ հաշիւը,* 1906 *թ. մարտի* 1-*ից մինչեւ* 1908 *թ. հոկտեմբերի* 28-*ը, խնդրեմ տպագրել Արարատում:*

*Հաշուի մէջ մտած չեն* 1905 *թ. նոյեմբեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին Տ. Յովսէփ Աւագ քահանայի ձեռքով ստացուած հանգուցեալ Նահապետ Յարութիւնեանի յիշատակին* 20*ռ. եւ օրիորդ Եւգինէ Տէր Սարգսեանի ձեռքով նուագահանդէսից* 327*ռ.* 30 *կոպ- որոնք գործադրուած են իրանց նպատակին եւ հրատարակուած:*

*Նպաստամատոյց մասնաժողովի հաշուի տումարը, որ վարել եմ ես, քննուած է մասնակի Երեւ. մասնաժողովի ձեռքով՝* 1906 *թ. յունիսի* 16-*ին, Թիֆլիզի կենդրօնական յանձնաժողովի հաւատարմատար պ. Արամ Տէր Գրիգորեանի ձեռքով՝* 1907 *թ. յունիսի* 1-*ին, եւ Երեւանի մասնաժողովի ամբողջովին՝* 1908 *թ. հոկտեմբերի* 28-*ին, երբ ես թողի Երեւանի թեմը:*

1906 *թ. Մարտի* 1-*ից մինչեւ* 1908 *թ. Հոկտեմբերի* 28-*ը եղել է մուտք՝* 28660 *ռ.* 51 *կ.*

*ծախք* 28565 *ռ.* 48 *կ., որ հանելով մուտքից՝ մնացորդ* 95 *ռ.* 3 *կ., յանձնեցի Կոնսիստորիայի գանձապահ պ. Միքայէլ Տէր Զաքարեանին նոր նշանակուելիք փոխ-թեմակալին ներկայացնելու, որով փակուեց հաշիւը մատեանում հետեւեալ արձանագրութեամբ.*

*«Ստուգելով սոյն եղ եւ մախց մատեանի մուտքն ու ծախքը «սկսեալ* 1906 *թ. Մարտի* 1-*ից մինչեւ Հոկտեմբերի* 27-*ը Երեւանի «նպաստամատոյց մասնաժողովս ճիշտ գտաւ եւ վաւերացրեց «իւր անդամների ստորագրութեամբ* 28 *Հոկտեմբերի* 1908 *թուի: (Ստորագրուած՝) անդամներ Գ. Ամիրեան, Բարսեղ Եղիազարեանց, անդամ քարտուղար Բ. Մեհրաբեանց»:*

*Հարկ եմ համարում բացատրել, որ* 1908 *թուի Յունվարի* 1-*ին մնացել էր* 358 *ռ.* 3 *կ. եւ այդ գումարով էլ նոր հաշիւ է սկսուած: Նոյն Յունուարի* 18-*ին պաշտօնական գործով Թիֆլիզ գնալիս առձեռն* 266 *ռ.* 28 *կ. ծախս գրելով՝ յանձնեցի Կոնսիստորիայի գանձապահին եւ, Փետրուարի* 15-*ին վերադառնալով Երեւան՝ յետ ստացայ եւ նորից մուտք գրեցի՝ սակայն համառօտ հաշուի մէջ գրուած են մուտքի եւ ելքի ընդհանուր գումարները առանց ընդհատումների, չէ յիշուած գանձապահին յանձնելիս ծախք եւ յետ ստանալիս՝ մուտք. եւ այս՝ գումարների ընդհանուր ամբողջութիւնը պահելու համար:*

| Հայ-թուրքական ընդհարումներից արկածեալների, Արդահանի սովեալների և Ալէքսանդրոպոլի հեղեղից վնասուած մուտքի և ծախքի հաշիւ. | | Ռուբլ. | Կ. |
|---|---|---|---|
| | Մուտք 1906 թ. Մարտի 1-ից—մինչեւ 1908 թ. Հոկտեմբերի 28-ը. | | |
| 1 | Թիֆլիզի Նպաստների Կենդրոնական Յանձնաժողովից ուղղակի և Սրբազան Առաջնորդի գրութիւններով | 26000 | |
| 2 | Բաթումի գործակալ Տ. Զաւէն վարդ. ձեռքով | 1000 | |
| 3 | Մախարբեգցի Մարջանից . . . . | 5 | |
| 4 | Աշտարակի գործակալի ձեռքով նոյն շրջանի հայ գիւղերից . . . . . . | 12 | |
| 5 | Վաղարշապատի գործակալի ձեռքով նոյն շրջանից | 100 | |
| 6 | Սուրմալուայ գործակալի ձեռքով նոյն շրջանից | 138 | |
| 7 | Երևանի Գենարալ Նահանգապետի ձեռքով . | 99 | 75 |
| 8 | Ալէքսանդրապոլի Հոգևոր Կառավարութեան միջոցով . . . . . . . | 71 | 98 |
| 9 | Սարդարապատի գործակալի ձեռքով նոյն շրջանից | 30 | 30 |
| 10 | Հանգուցեալ Արամ Մելիքեանի յիշատակին նրա մօրից պ. Բարսեղ Եղիազարեանի ձեռքով . | 200 | |
| 11 | Պ. Բարսեղ Եղիազարեանից իւր հանգուցեալ դստեր յիշատակին . . . . . | 500 | |
| 12 | Երևանի Ս. Սարգիս եկեղեցու երեսփոխանի ձեռքով Զատկի ճրագալուցին . . . . | 15 | |
| 13 | Նորքի Ս. Սիմէօն եկեղեցու երեսփոխանի ձեռքով Զատկի ճրագալուցին . . . . . | 6 | 80 |
| 14 | Երևանի Ս. Լուսաւորիչ եկեղեցու երեսփոխանի ձեռքով գանձանակ, աղքատների և մատաղի փողի մնացորդ . . . . . . | 30 | 36 |
| 15 | Երև. Ս. Զօրաւոր եկեղեցու երեսփոխանի ձեռքով գանձանակ մատաղ եայլն . . . . | 42 | 63 |
| 16 | Երև. Ս. Կաթուղիկէ և Ս. Պետրոս Պօղոս եկեղեցիների գանձանակ՝ մատաղի մնացորդ Էջմ. գործակալ Տ. Մատթէոս քհանայի ձեռքով . . | 216 | |
| 17 | Պ. Սիրաք Գրիգորեանից Արդահանի սովեալներին բաժանուած գումարի մնացորդ . . . | 33 | 50 |
| 18 | Ծախքի հաշւում պակաս գրուած (յօդ. 19, Մարտ 30) . . . . . . | | 25 |
| 19 | Երև. արհեստաւորներից Հանգ. Հայրապետի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն . . | 50 | |

| | | | |
|---|---|---|---|
| 20 | Նոր Նախիջևանի հայ զինուորներից հանգուցեալ Հայրապետի յիշատակին | 15 | |
| 21 | Երև. Գ. Յարութիւն Շամիրեանցից Ս. Սարգսի աղքատներին Ծննդեան տօներին | 30 | |
| 22 | Ծննդ. ճրագալոյցին Երևան, Ս. Պետրոս—Պօղոս և Կաթուղիկէ եկեղեցիների գանձանակ գործակալի ձեռքով | 28 | 90 |
| 23 | Շարուրի գործակալի ձեռքով Ալէքսանդրօպօլի հեղեղից վնասուածների օգտին | 25 | 4 |
| 24 | Գ. Մաթէոս Ամիրխանեանից իւր մօր յիշատակին Ալէքս. հեղ. վնասուածներին | 10 | |
| | | 28660 | 51 |

| | Ծախք 1906 թ. Մարտի 1-ից մինչև 1908 թ. Հոկտ. 28-ը | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|
| 1 | Բանկային ծախք փոխադրուած դրամների համար | 2 | 30 |
| 2 | Փոստային ծախք դրամ փոխադրելու համար | 18 | 28 |
| 3 | Շարուրցիներին ցորեն՝ Յովհաննէս Սողոմոնեանցի և Գրիգոր Այվազեանի ձեռքով և նրանց ճանապարհածախք | 3169 | 31 |
| 4 | Արարատի և Շարուրի ներկայացուցիչներին ճանապարհածախք | 36 | |
| 5 | Անհատներին մասնաժողովի որոշմամբ և պատահական աղքատներին | 610 | 54 |
| 6 | Էջմիածնի գաւառի Ղօյթուր գիւղին Աշտարակի գործակալ Տ. Թադէոսի և Յովհաննէս Սողոմոնեանցի ձեռքով, ճանապարհածախքով միասին | 506 | 35 |
| 7 | Երևանում բնակող Նախիջևանցի, գանձակեցի և այլ արկածեալներին Յովհաննէս Սողոմոնեանցի ձեռքով | 220 | |
| 8 | Բէշտաղցիներին Յովհ. Սողոմոնեանցի և մասնաժողովից կարգուածների ձեռքով | 1400 | |
| 9 | Ալիբուչաղցի Յարութիւն Աստուածատրեանին Թիֆլ. Կենդ. յանձնաժողովի որոշմամբ | 20 | |
| 10 | Նորոեցի այրի երիցուհի Հռիփսիմէ Սմբատեանցին Թիֆլ. Կենդր. Յանձնաժողովի որոշմամբ | 100 | |
| 11 | Խորվիրապի վանքին Թիֆլ. Կենդր. Յանձնաժողովի որոշմամբ | 200 | |
| 12 | Եկեղեցական զգեստների առաքման ծախք | 5 | 81 |
| 13 | Հեռագրներ | 11 | 10 |
| 14 | Ծանուցագրերի տպագրութեան Տէր Մատթէոս քահանային | 5 | 50 |

| | | | |
|---|---|---|---|
| 15 | Այապաւի քահանայորդուն Գեներալ Նահանգապետի տուած . . . . . | 99 | 75 |
| 16 | Մարիամ Թաղէոսեանին Յովհաննէս Սողոմոնեանի ձեռքով . . . . . . . | 40 | |
| 17 | Տաճկաստանից և Պարսկաստանից եկած գաղթականներին . . . . . | 50 | |
| 18 | Ուխտաւորաշէնցիներին, մասնաժողովից կարգուած անձանց ճանապարհածախք, գիւղը վերաշինելու յատակագիծ կազմելու ծախք, դատարանի փոխանորդութեան ծախք Տէր Վահանին, երկրագործական պարագաների փոխադրութեան՝ հոգաբարձութեան հաւատարմատարին և Գէորգ մահտեսի Սայեադեանին . . . . . . . | 10589 | 74 |
| 19 | Թիֆլիզի կենդր. Յանձնաժողովին, Պ. Բարսեղ Եղիազարեանի նուիրած . . . | 500 | |
| 20 | Արարատի սովեալներին, գաւառը ուսումնասիրողների և դրամ բաշխողների ճանապարհածախք, Եփրեմ քահանային և Իլանչալանցի Վարդանեանին նպաստ . . . . : . . | 10296 | 86 |
| 21 | Սիսիանցիներին, Տիկին Մելիքեանի՝ ի յիշատակ իւր Արամ որդու նուիրած . . . | 200 | |
| 22 | Թեմ. դպրոցի մարաղեցի երեք աշակերտներին Թիֆ. կենդ. յանձնաժողովի որոշմամբ անընդադրամ պարբերաբար ամսականով . . . . | 338 | |
| 23 | Նոր Բայազէդի սովեալների յանձնաժողովին . | 78 | 90 |
| 24 | Ալէքսանդրոպոլի հեղեղից վնասուածների նպաստ տեղւոյն քաղաքային վարչութեան . . | 35 | 4 |
| 25 | Աղքատների թաղման . . . . | 2 | |
| 26 | Երև. Ս. Սարգիս եկեղեցու աղքատ ծխականներին Յարութիւն Շամիրեանի նուիրած . . . | 30 | |
| 27 | Մնացորդ 95 ռ. 3 կոպ. Կոնսիստորիայի գանձապահ Պ. Միքայէլ Տէր Զաքարեանին յանձնուած նշանակուելիք Փոխ-Թեմակալին տալու . . . | 95 | 3 |
| | | 28660 | 51 |

Երև. Նախկին փոխ-Թեմակալ՝

**Յուսիկ Արքեպիսկոպոս**